

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 2/3.2

յոթը նոյեմբերի 2013 թվականի

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Ձեռնարկությունների հետ Երևանի պետական համալսարանի համագործակցության ռազմավարությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

**Ձեռնարկությունների հետ ԵՊՀ
համագործակցության ռազմավարություն**

1. Ընդհանուր դրույթներ

1. Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) սահմանում է ՀՀ պետական և մասնավոր ընկերությունների ու ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկությունների) հետ ԵՊՀ-ի կողմից իրականացվող աշխատանքների հիմնական սկզբունքները, գերակայությունները և համապատասխան աշխատանքային ձևաչափերը:

2. Ռազմավարությունը բխում է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրից, մասնավորապես XI. ա) խնդրով նախատեսված գործողություններից:

3. Ռազմավարությունը հիմք է ԵՊՀ-ում համահամալսարանական և ֆակուլտետային մակարդակում ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքների և դրանից բխող գործողությունների համար:

4. Սույն ռազմավարության մշակման համար հիմք են եղել նաև ԵՊՀ փորձնական հավատարմագրման փորձագիտական խմբի այցի շրջանակներում փորձագետների կողմից ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները:

2. Ռազմավարության նպատակը

5. Ռազմավարության նպատակն է ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության արդյունավետության բարձրացումը և նախանշված քաղաքականության իրականացման ապահովումը:

3. Ռազմավարության խնդիրներն ու գերակայությունները

6. Ռազմավարության խնդիրներն են՝

- Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության շրջանակի ընդլայնում:

- Ձեռնարկությունների հետ համագործակցության համապատասխան աշխատանքային ձևաչափերի սահմանում (համալսարանի և ֆակուլտետների պատասխանատու կառույցների փոխգործակցության ապահովում):
- Ձեռնարկությունների հետ համագործակցության ուղղությամբ համապատասխան աշխատանքների ծրագրավորում:

7. Ռազմավարությամբ սահմանվում է, որ ձեռնարկությունների հետ համագործակցության բնագավառում գերակա են համարվում հետևյալ ոլորտները.

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Միկրոէլեկտրոնիկա և հեռահաղորդակցություն,
- Մանրի անվտանգություն և կենսատեխնոլոգիա,
- Դեղագործություն,
- Հանքարդյունաբերություն,
- Զբոսաշրջություն և սերվիսի բնագավառ,
- Կառավարում, շուկայագիտություն, ֆինանսական, բանկային և ապահովագրական ոլորտ,
- Հոգեբանական ծառայություններ,
- Իրավաբանական խորհրդատվական ծառայություններ:

4. Ձեռնարկությունների հետ համագործակցության ուղղություններն ու կազմակերպչական ձևաչափերը

8. Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- Ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցություն կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մոնիթորինգի գործընթացներում,
- Ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցություն դասավանդման աշխատանքներում,
- Ուսումնական պլանով նախատեսված և արտասուսումնական պրակտիկայի կազմակերպում,
- Ուսանողների և շրջանավարտների մասնագիտական կարիերայի զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացում,
- ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդրի լուծմանն աջակցում,
- Ձեռնարկությունների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում,
- Ձեռնարկությունների աշխատակազմի անդամների վերապատրաստում,

- Ձեռնարկությունների բիզնես հեղինակության բարձրացմանը միտված և այլ ուղղություններով աշխատանքների կազմակերպում:

9. Ձեռնարկությունների հետ աշխատանքները համակարգում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցություն ապահովող մշտական հանձնաժողովը: Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացվում է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից:

10. ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը վարում է ԵՊՀ գործընկեր ձեռնարկությունների տվյալների ամբողջական բազան (ըստ համագործակցության ուղղությունների, ստորաբաժանումների և այլն), միջոցներ է ձեռնարկում նոր գործընկեր կազմակերպությունների հետ կապեր ստեղծելու ուղղությամբ, պարբերաբար կազմակերպում է ձեռնարկությունների հետ համագործակցության զարգացմանը միտված միջոցառումներ (հանդիպումներ, ընդունելություններ, համաժողովներ և այլն), մեթոդական աջակցություն է ցուցաբերում ձեռնարկությունների հետ ԵՊՀ ֆակուլտետների համագործակցության խորհուրդների աշխատանքներին, ապահովում է ձեռնարկությունների հետ համագործակցության պորտալի շահագործման ընթացիկ աշխատանքները: Համապատասխան աշխատանքները խթանելու և ուսանողների մոտիվացիան բարձրացնելու նպատակով ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպելու է տոնավաճառներ, այցելություններ ձեռնարկություններ, հանդիպումներ, քննարկումներ, ինչպես նաև սեմինար-դասընթացներ: Կենտրոնը պարբերաբար իրականացնելու է ծրագրեր բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցության հաջողված փորձի և այլ խնդիրների ուսումնասիրման ուղղությամբ:

11. Ձեռնարկությունների հետ անմիջական համագործակցություն իրականացնող հիմնական օղակներ են համարվում ուսումնագիտական գործընթաց իրականացնող ստորաբաժանումները՝ ֆակուլտետներն ու կենտրոնները: Այս նպատակով ֆակուլտետներում ստեղծվելու են ձեռնարկությունների հետ համագործակցության խորհուրդներ (Խորհրդի օրինակելի աշխատակարգը՝ Հավելված 1-ում):

12. Ֆակուլտետի ղեկանը (կենտրոնի տնօրենը) համակարգում է ֆակուլտետի (կենտրոնի) կողմից ձեռնարկությունների հետ համագործակցության արդյունավետ կազմակերպումը: Խորհրդի քարտուղարը անմիջական կապ է ապահովում ղեկանատների, Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, Պրակտիկայի բաժնի, ֆակուլտետների պրակտիկայի ղեկավարների, ուսումնական խորհրդատուների (կուրատորների) և համագործակցության աշխատանքներում ներգրավված այլ անձանց հետ:

13. Ֆակուլտետի և ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայնման նպատակով սահմանված կարգի համաձայն ֆակուլտետների գիտական

խորհուրդներում պետք է ներգրավվեն առավել ակտիվ ձեռնարկությունների ներկայացուցիչներ:

14. Ուսանողների գործնական հմտությունների զարգացումը դիտարկվում է որպես ձեռնարկությունների հետ համագործակցության առաջնային խնդիր: Այն իրագործելու համար աշխատանքներ են տարվելու երկու հիմնական ուղղություններով՝

- ուսումնական պլանով նախատեսված ուսումնաարտադրական և մանկավարժական պրակտիկաներ,
- արտաուսումնական (ուսումնական պլանով չնախատեսված) արտադրական պրակտիկաներ (ինթերնշիփ):

15. Պրակտիկայի բաժնի և համապատասխան ֆակուլտետների կողմից վերանայվելու են ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների ծավալները, և կատարելագործվելու են կազմակերպման ընթացակարգերը: Դպրոցների հետ համագործակցության ընդլայնման և զարգացման համատեքստում առավել համակարգված է դառնալու նաև մանկավարժական պրակտիկան:

Արտաուսումնական պրակտիկաների (ինթերնշիփի) կազմակերպումը համակարգվելու է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից, մշակվելու է նշված գործընթացը կանոնակարգող փաստաթուղթ, որը ներկայացվելու է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

16. Ձեռնարկությունների հետ համագործակցությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվելու է ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության ինտերնետային պորտալ: Պորտալում ներկայացվելու են գործընկեր ձեռնարկությունների տվյալների բազան, ձեռնարկությունների հետ համագործակցության ֆակուլտետային խորհուրդների կազմը և իրականացված աշխատանքները, ինչպես նաև պրակտիկայի, աշխատանքային հնարավորությունների և այլ տեղեկատվություն:

17. ԵՊՀ շրջանավարտներից հիմնական գործատու (գործընկեր) կազմակերպությունների բավարարվածության վերաբերյալ հարցումների իրականացման նպատակով ԵՊՀ դասընթացների որակի գնահատման առցանց համակարգում նախատեսվելու է համապատասխան հարցումների իրականացման հնարավորություն:

18. Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցությունն ամփոփվելու է ձեռնարկությունների հետ համագործակցության տարեկան զեկույցում, որը ներկայացվելու է ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

19. Սույն ռազմավարությամբ սահմանված նպատակների և խնդիրների արդյունավետ իրագործման նպատակով ԵՊՀ տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվում նախատեսվելու են համապատասխան ֆինանսական միջոցներ: